ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը,

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերը արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառների համատեքստում,

Ընդունելով կամավորական միասնական ջոկատներ ստեղծելու և զարգացնելու Կողմերի ջանքերը և պատրաստակամությունը,

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Կողմերն իրականացնում են մասնագիտական և ասպիրանտական հետազոտական համատեղ ծրագրեր:

2.2 Ինստիտուտը կազմակերպում և իրականացնում է ֆիզիկական պատրաստվածության դասընթացներ հրշեջ-փրկարարաների համար Ինստիտուտի կամ Ծառայության համապատասխան տարածքներում՝ համաձայն Կողմերի միջև հետագայում հաստատվող դասընթացի պլանի և ժամանակացույցի:

2.3 Կողմերը համատեղ ստեղծում են կամավորական ուսանողական թիմեր և միասնական ջոկատներ և համակարգում են նրանց աշխատանքները,

2.4 Համատեղ իրականացնում են փոխայցելություններ ուսանողական պրակտիկաների ընթացքում,

2.5 Իրականացնում են երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական (սպորտային, վերականգնողական, առողջարարական և այլն) բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում համատեղ հետազոտություններ:

2.6 Կողմերը համագործակցում են միջազգային գիտական կոնֆերանսների, սեմինարների, ստեղծագործական բանավեճերի, խորհրդակցությունների համագործակցության շրջանակներում,

2.7 Իրականացնում են գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում:

2.8 Կարող են համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցել և ստանալ:

2.9 Հնարավորություն ունեն համատեղ օգտագործել կողմերի գրադարանային ֆոնդերը:

2.10 Սույն Հուշագրի կատարման կազմակերպչական աշխատանքների համար պատասխանատու են «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի արտաքին կապերի և զարգացման գծով պրոռեկտորը, և Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենի առաջին տեղակալը:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեներ

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է 21.09.2020թ–ին ԱՀ Ստեփանակերտ քաղաքում, երկու բնօրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ 1	**Կողմ 2**
Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայություն	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ
ք. Ստեփանակերտ, Ա.Առաքելյան 17	ք. Երևան, Ալեք Մանուկյան 11
Տնօրեն՝ Կարեն Սարգսյան	Ռեկտորի ժ/պ՝ Դավիթ Խիթարյան
Ստորագրություն՝ Կ.Տ.	Ստորագրություն՝ Կ.Տ.